

ԱՒԵՏԱԲԵՐ




Հայ Կաթողիկե Ժողովրդապետություններու

29 ապրիլ 2018

ԺԷ. Տարի

Թիւ 18

**Հինգերորդ Կիրակի Յինանց:
Տօն Երեւման Սուրբ Խաչի: (ճաշոց էջ 290)**



ԺԱՄԱՄՈՒՏ

Քրիստոս յարութիւն առաւ մեռելներէն, իր մահովը մահը խորտակեց եւ իր յարութեամբը կեանք պարգեւեց մեզի. յաւիտենապէս փա՛ռք Ասոր. ամէն:

ՃԱՇՈՒ ՇԱՐԱԿԱՆ ԳՁ

Քրիստոս Թագաւորը օրհնութեան երգով բարեբանեցեք, արար աշխարհ:
Երկինքը եւ երկիրը ստեղծողին երգով գոհաբանութիւն մատուցանեք, արար աշխարհ:
Երրորդութեան ու մէկ Աստուածութեան պատիւ, երկրպագութիւն մատուցանեք յաւիտեան, արար աշխարհ:

ՄԵՍԵՐԻ (Սաղմոս 85, 1, 86, 2 եւ 87, 2)

Տէ՛ր, ականջդ ինձի խոնարհեցուր, լսե՛ ինձի, որովհետեւ աղքատ եւ խեղճ եմ: Երուսաղէմի հիմերը իր սուրբ լէրան վրայ հաստատուած են, Տէրը՝ Յակոբի միւս բոլոր բնակավայրերէն ալ աւելի Սիոնի դռները կը սիրէ: Ո՛վ Տէր, փրկութեանս Աստուածը, գիշեր-ցերեկ քու առջեւդ ինկած՝ քեզի կը գոչեմ:

ԸՆԹԵՐՑՈՒԱԾ ՔԱՐՈՉՈՒԹԻՒՆՆԵՐ

Առաքելներուն Գործերն Է այս ընթերցուածը:

(Գ. Առք. 17, 1-15)

Ամփիպոլիսէն ու Ապոդոնիայէն անցելով՝ եկան Թեսաղոնիկէ, ուր հրեաները ժողովարան ունէին: Ըստ սովորութեան, Պօղոս մտաւ անոնց մօտ եւ երեք շաբաթ յաջորդաբար անոնց հետ խօսեցաւ Սուրբ Գիրքի մասին: Բացատրեց անոնց, ապացուցանելով, թէ Զրիստոս պէտք է չարչարուէր եւ մեռելներէն յարութիւն առնէր եւ կ'աւելցնէր. «Զրիստոս, այս Յիսուսն է, զոր կը քարոզեմ ձեզի»: Անոնցմէ ոմանք համոզուեցան եւ անցան Պօղոսի եւ Շիղայի կողմը, ինչպէս նաեւ ասոնցմէ զատ շատ աստուածավախ մարդիկ, հեթանոսներ եւ բազմաթիւ ազնուագարմ տիկիներ: Զրեաները սակայն, նախանձէ տարուած, հաւաքեցին գռեհիկ եւ անօրէն մարդիկ, ամբոխ կազմեցին եւ քաղաքը խռովեցին: Խռուեցան Յասովնի տան առջեւ, կ'ուզէին զանոնք ժողովուրդին առջեւ հանել: Զգտնելով զանոնք, քաշեցին Յասովնը եւ ուրիշ եղբայրներ քաղաքապետին առջեւ եւ աղաղակեցին. «Այս մարդիկը ամբողջ աշխարհը խռովեցին եւ հիմա հոս հասած են եւ Յասովն անոնց բնակութիւն տուած է: Ասոնք Կայսրին հրամաններուն հակառակ կ'ընթանան, երբ

կ'ըսեն, թէ ուրիշ թագաւոր մը կայ Յիսուս անունով»: Այս աղաղակներով վրդովեցին բազմութիւնը եւ քաղաքապետերը, որոնք երաշխաւորութիւն առին Յասովնէն ու միւսներէն եւ ապա զանոնք ազատ արձակեցին:

Եղբայրները փութով, Պօղոսն ու Շիղան, գիշերանց Բերիա դրկեցին: Զոն հասնելով՝ իսկոյն գացին հրեաներու ժողովարանը: Ասոնք աւելի բարձրագի էին քան Թեսաղոնիկէի հրեաները եւ յօժարութեամբ ընդունեցան Աստուծոյ խօսքը: Ամէն օր կը քննէին Սուրբ Գիրքը ստուգելու համար, թէ բոլոր ըսուածները ճիշդ են: Շատեր հաւատացին, ինչպէս նաեւ հեթանոսներու մէջէն ազնուագարմ տիկիներ եւ բազմաթիւ մարդիկ: Բայց Թեսաղոնիկէի հրեաները երբ իմացան որ Պօղոս Բերիայի մէջ Աստուծոյ խօսքը քարոզեց, եկան հոն ալ բազմութիւնը յուզելու եւ խռովելու: Եղբայրներն իսկոյն Պօղոսն ուղարկեցին ծովեզերք, իսկ Շիղա եւ Տիմոթէոս մնացին այնտեղ: Պօղոսին ընկերացողներն առաջնորդեցին իրեն մինչեւ Աթէնք եւ վերադարձան՝ հրահանգ բերելով Շիղայի եւ Տիմոթէոսի՝ շուտով իրեն միանալու:

Ալէլուիա, Ալէլուիա,

Ո՛վ Երուսաղէմ, դուն Տէ՛րը օրինէ: Եւ դուն ալ ո՛վ Սիոն, քու Աստուածդ օրինէ:
(Սաղմոս 147, 12)

Ալէլուիա:

ԱՒԵՏԱՐԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

(Յովհ. 7, 14-23)

Տօնական օրերուն կէտը անցած էր, երբ Տաճար ելաւ եւ սկսաւ սորվեցնել: Հրեաները զարմացած կ'ընտին. «Ի՞նչ պէս Ս. Գիրքը գիտէ, քանի երբեք չէ սորված»: Յիսուս պատասխանեց. «Իմ վարդապետութիւնս ինձմէ չէ, այլ Անկէ, որ զիս դրկեց: Եթէ մէկը ուզէ անոր կամքը կատարել՝ պիտի տեսնէ թէ իմ վարդապետութիւնս Աստուծմէ՞ է, կամ ես ինձմէ կը խօսիմ: Ով որ ինքն իր անունով խօսի՝ իր փառքը կը փնտռէ, բայց ով որ փնտռէ փառքը զինք դրկողին՝ անիկա ճշմարիտ է եւ խաբէութիւն չունի: Միթէ

Մովսէս չտուա՞ւ ձեզի Օրէնքը. եւ սակայն ձեզմէ ոչ ոք կը պահէ զայն: Ինչո՞ւ կ'ուզէք սպաննել զիս»: Բազմութիւնը պատասխանեց. «Դիւահարած ես, ո՞վ կ'ուզէ քեզ սպաննել»: Յիսուս անլցուց. «Գործ մը կատարեցի եւ ամէնքդ զարմացած էք: Մովսէս ձեզի թլփատութիւնը տուաւ, թէպէտ Մովսէսէն չէ, այլ՝ Նահապետներէն, եւ դուք զայն կը կատարէք շաբաթ օրը: Այսպէս, շաբաթ օրը մարդ կը թլփատէք, որպէսզի Մովսէսի Օրէնքը չլուծուի, ինչո՞ւ կը բարկանաք ինձի, որ շաբաթ օրով ամբողջ մարդ մը բժշկեցի»:

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ ԵՐԿԵԼՅԻՆ ԱՌԱՔԵԱԼԸ

Կիրակի օրուայ Աւետարանի այս հատուածը Նոյն գիծով կը շարունակէ հինգերորդ գլուխին գաղափարը. Յիսուս, ճշմարիտ Աստուած եւ ճշմարիտ մարդ, «Ինչ որ Հայրը կ'ընէ Նոյնը կ'ընէ Նաեւ Որդին...» (Յվհ. 5, 19):


Հրեայ պետերը, Յիսուսի յանդուգն յայտարարութեան պատճառաւ որոշեցին սպաննել զինք, որովհետեւ Ան ոչ միայն շաբաթը չէր պահէր եւ Աստուած իր «Հայրը» կը կոչէր, այլ Նաեւ ինքզինք Աստուծոյ հաւասար կը դասէր (Յովհ. 5, 18): Սպառնալիքը լուրջ էր, սակայն մարդոց համար եւ ոչ թէ Յիսուսի, որ Տէր է պատմութեան եւ ամենայն ազատութեամբ ընդգրկեց Հօր Աստուծոյ Սիրոյ փրկչական Ծրագիրը, իր բոլոր չարչարանքներով:

Տաղաւարահարաց տօնը կը զուգահիշէր Սեպտեմբերի վերջին օրերուն: Տօնախմբութիւնները կը տեւէին եօթը օր, որոնք ընթացքին ժողովուրդը իր երախտագիտութիւնը կը յայտնէր Աստուծոյ, իր տուած բարիքներուն համար: Յետագային, Նոյն առիթով կը կատարուէր Նաեւ Սինայի Ուխտին յիշատակութիւնը: Այս «տօնական օրե-

րուն կէտը անցած էր, երբ Յիսուս Երուսաղէմի Տաճարը ելաւ», գաղտնի, շարունակելու համար իր փրկչական առաքելութիւնը. «Եւ սկսաւ սորվեցնել»: Ան միշտ սիրով ու վարդապետական իմաստութեամբ կը դիմադարձէր իր հակառակորդներուն, որոնք կը զարմանային իր հմտութենէն: Ան հմուտ է Ս. Գիրքին, առանց յաճախելու ռաբբունիներուն դպրոցը:

Յիսուս ինքզինք յայտնեց որպէս Կեանքի ջուրը ժայթքեցնող աղբիւր, որուն ջուրով կը կենդանանայ Նոր Երուսաղէմը ու կը կերտէ Եկեղեցին: Ան ամէն կողմ սերմանեց իր վարդապետութիւնը: Ժողովուրդը զայն չըմբռնեց, որովհետեւ չձերբագատուեցաւ իր մարդկային սահմանափակ մտածելակերպէն. չզերագանցեց իր մարդկային կարողութիւնը, այլ ճանչցաւ Քրիստոսի մէջ լոկ մարդ արարածը, ծնողքը՝ Մարիամ եւ Յովսէփ, ծննդավայրը՝ Նազարէթ: Անոնք Չինք ճանչցան ու հետը ապրեցան որպէս ատաղձագործի տղան: Սակայն Յարութենէն ետք աշակերտները եւ բոլոր անոնք, որոնք լուսաւորուեցան Աւետիսի լոյսով ու ա-

զատագրուեցան «Ես»-ի ստորկութենէն, աւելի յստակ ըմբռնեցին Անոր ճշմարտութիւնը ու Անոր վարդապետութեան աստուածային ծագումը: Արդարեւ, Յիսուս Փրկչին ծագումին խորհուրդը կ'իմացուի աստուածային ներշնչումով, նոյնիսկ Զրիստոսի վկայութեամբ. «Եթէ մէկը ուզէ անոր կամքը կատարել՝ պիտի տեսնէ, թէ իմ վարդապետութիւնս Աստուծմէ՞ է, կամ ես ինձմէ կը խօսիմ»:



Յիսուս իր աստուածային բնութեամբ ինքզինք ծանօթացուց որպէս խոստացուած ՓՐԿԻՉԸ, Աստուծոյ Միածին Որդին: Աստուծմէ եկած ըլլալով, Ան հռչակեց Աւետիսը ու իր զօրութիւնը աստուածային կեանքը շնորհելու, զոր հրեաները մերժեցին: Յիսուս ճշմարիտ էր, որովհետեւ, Հօր կամքը կատարելով ու սորվեցնելով երկնային վարդապետութիւնը, չփնտռեց իր փառքը, այլ՝ Անոր որ զինք ղրկեց:

Հրեաները չհասկցան այդ վարդապետութիւնը, որովհետեւ ոչ միայն չէին հասկնար Օրէնքը ու անոր խորքը, այլ աւելին, կ'աղաւաղէին զայն, խզելով անկէ իր ոգեղէնը, պահելով միայն արտաքինը: Աւելին, կը ջանային Աստուծոյ գործը սահմանել, ճշդել ու ենթարկել իրենց մարդկային որոշումին: Անոնք մոռցան, թէ Աստուծոյ գերագոյն աստուածութիւնը կը գերազանցէ իրենց կարճատեսութիւնն ու նեղ հորիզոնները:

Յիսուս, ինքզինք հռչակելով Աստուծոյ Որդի, ծանօթ՝ աստուածային ճշմարտութեան, կենդանի մեղադրանք էր հովուապետերու, որոնք կը խեղաթիւրէին Ս. Գիրքը ու կ'ապականէին Մովսիսական կրօնքը: Ասոնք Զրիստոսի մէջ կը տեսնէին լոկ մարդը. «Ու-

րիշները ազատեց, ինքզինք չի կրնար ազատել: Եթէ Խրայելի թագաւորն է, թող իջնէ խաչէն եւ մենք պիտի հաւատանք իրեն» (Մատթ. 27, 42): Անոնք, դեռ աւելին, զինք սպառնալիք կը նկատէին իրենց կերտած կրօնական աւանդութիւններուն:

Այս հալածանքը, որուն ենթարկուեցաւ Յիսուս, պիտի հարուածէ նաեւ Եկեղեցին ու Զրիստոնէաները. «Եթէ աշխարհը ձեզ ատէ, գիտցէք որ նախ զիս ատեց: Եթէ ըլլայիք այս աշխարհէն, աշխարհը անշուշտ պիտի սիրէր իրենները...» (Յովհ. 15, 18-19): Ս. Պօղոս եւս կը հաստատէ. «Այո՛, անոնք որ կ'ուզեն աստուածպաշտութեամբ ապրիլ Զրիստոսի մէջ, պիտի հալածուին» (2 Տիմ. 3, 12):

Զրիստոնէան, հաւատարիմ Աւետարանին, աշխարհ եկաւ վկայելու Զրիստոսի հետ. «Եկած եմ կրակ մը վառելու երկրի վրայ, որքան կը ցանկայի որ արդէն իսկ բորբոքէր» (Ղուկ. 12, 49):